2.4.4 շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր սվալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (_____ տարեորով _____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁹

¹⁹ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰ Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²⁴

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²⁵

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

²⁴ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

²⁵ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար (եթե ժամանակավոր դադարեցումը պահանջում է ֆինանսական միջոցներ):

Պայմանագրով նախատեսված 2021 թվականի համար սահմանված ծառայությունների մատուցումը կիրականացվի այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը մասնակի կլուծվի, եթե 2021 թվականի մասով այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չնախատեսվեն: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից մասնակի միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²⁷ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն դրամ

Ծառայություն							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը/«Ն դրամ	Ընդհանուր քանակը	Կատարման	
						Հասցեն	Նախընտրելի ժամկետը
1	71311300/1	Ներկայացված է ստորև	դրամ		1	Երևան քաղաք	Պայմանագրի (համաձայնագրի) ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը
2	71311300/2	Ներկայացված է ստորև	դրամ		1	Երևան քաղաք	Պայմանագրի (համաձայնագրի) ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը
3	71311300/3	Ներկայացված է ստորև	դրամ		1	Երևան քաղաք	Պայմանագրի (համաձայնագրի) ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը

1-ին չափաբաժին

Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Համառոտ ակնարկ

Երևանի քաղաքապետարանը ԵՄ աջակցությամբ իրագործում է «Երևան.Արևային համայնք» ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.111-Ա որոշմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018-2021թթ. ընթացքում:

Երևան քաղաքում բնակչության մեծամասնությունը՝ ավելի քան երկու երրորդը (շուրջ 720000 բնակիչ), ապրում է բազմաբնակարան շենքերում: Երևանում առկա է 4932 բազմաբնակարան շենք, որից 4428-ում առկա է վերելակ:

Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» համաձայն՝ բնակելի շենքերին բաժին է ընկնում քաղաքի բազային էներգասպառման կեսը: Ծրագրի նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված ջերմոցային գազերի արտանետումները (ԶԳ)՝ էներգախնայողության միջոցառումների իրականացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով: Ծրագրի նպատակն է աջակցել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին (համատիրություններին) էներգասպառման կառավարման գործում՝ էներգաարդյունավետության միջոցառումների կիրառման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման միջոցով՝ ապահովելով բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրությունը (շքանուտքերի, աստիճանավանդակների լուսավորություն, վերելակի էլեկտրաէներգիա, բակային լուսավորություն և այլն):

Արևային վահանակները նախատեսվում է տեղադրել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի տանիքներին: Այսպիսով, արևային վահանակների տեղադրումը շենքի տանիքներում շահավետ կլինի բոլորի համար: Ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան ամբողջությամբ կծածկի շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների և բակային տարածքների էներգիայի սպառման պահանջարկը, իսկ ավելցուկը կվաճառվի էլեկտրական ցանցին: Եկամուտները կկուտակվեն յուրաքանչյուր շենքի համար ստեղծված նպատակային բնակային հաշիվներում և կարող են օգտագործվել շենքերում էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված, նախապես հաստատված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Նշանակման նպատակը

Ավագ ֆինանսական փորձագետը պատասխանատու կլինի «Երևան.Արևային համայնք» ծրագրի բիզնես մոդելի մշակման, կառավարման սխեմայի համար, ինչպես նաև աջակցություն կցուցաբերի Ծրագրի իրագործման աշխատանքային խմբին (այսուհետև՝ ԾԻԱԲ)՝ ծրագրի կառավարման գործում, զգալի ներդրում կունենա «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում: Փորձագետը աշխատելու է ԾԻԱԲ-ի հետ՝ տեխնիկական առաջադրանքների, նախատեսվող աշխատանքների ծավալների և սարքավորումների ձեռքբերման պայմանագրերի, հաշվետվությունների, ֆինանսական, բյուջետային կառավարման և այլ փաստաթղթերի մշակման նպատակով:

3. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Միջանկյալ և այլ հաշվետվությունների մշակում, գործողությունների պլանավորում, մասնակցություն ժողովներին (նաև հեռավար), աշխատանքային հանդիպումներին:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ ՀՄՀ մոդելի մշակում, որում արտացոլված կլինի քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների, առևտրային կազմակերպությունների համագործակցության սխեման: ԾԻԱԽ-ի հետ համատեղ «Արևային ուղեցույցի» մշակում:
- Արևային կայանների, ներքին և արտաքին լուսավորության համակարգերի տեղադրումից հետո ԾԻԱԽ-ի հետ համատեղ համատիրությունների համար նպատակային հաշիվների գործունեության և կառավարման վերաբերյալ դասընթացների անցկացում:
- Առաջին և երկրորդ փուլերով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման աշխատանքներին աջակցություն, տեխնիկական փաստաթղթերի վերանայում և ընդունում:
- Առաջին փուլով ընտրված շենքերում տեղադրման աշխատանքների վերահսկողության և մոնիթորինգի ապահովում:
- Երկրորդ փուլով ընտրված շենքերի շրջանառու ֆոնդի մոդելավորում, ֆինանսական կատարողականի վերլուծություն՝ այլ համատիրությունների կողմից կրկնօրինակման հնարավորությամբ:
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ծրագրի երկրորդ փուլով ընտրված ԲԲՇ-ների տվյալների բազայի ձևավորման գործընթացին: Երկրորդ փուլի շենքերի ցուցակի վերանայում, վերջնական գնահատում և հաշվետվության կազմում:
- Երկրորդ փուլով ընտրված շենքերի էներգիայի պահանջարկի վերլուծություն, արևային ՖՎ համակարգերի չափագրում առանց ՖՎ մոդելավորմանը աջակցություն: Երկրորդ փուլով ընտրված շենքերի ներքին և արտաքին լուսավորության համակարգերի չափագրմանը աջակցություն:
- Էներգախնայող լուսավորության տնտեսումների, արևային էլեկտրաէներգիայի օգտագործման և ավելցուկային արևային էլեկտրաէներգիայի վաճառքի (net metering) վերաբերյալ տեխնիկական հաշվետվությունների և մոնիտորինգի արդյունքների վերահսկողության իրականացում՝ ծրագրի տեխնիկական փորձագիտական թիմի և ԾԻԱԽ-ի հետ համատեղ:
- Աջակցություն նախագծի մոնիտորինգի և հաշվետվությունների կազմման, ինչպես նաև էներգաարդյունավետության ավելի լայն տեղեկատվության կառավարման համակարգի ստեղծմանը, կատարողականության չափման գնահատման մեթոդաբանության և այլ առավելությունների սահմանման գործում:
- ԾԻԱԽ-ի և ծրագրի տեխնիկական փորձագիտական թիմի հետ համատեղ, որպես «Արևային ուղեցույցի» մի բաղադրիչ, նախագծի իրագործման ֆինանսատնտեսական ուսումնասիրություն/գնահատում՝ ԵՄ ֆինանսավորման բացակայության պայմաններում տարբեր ֆինանսական սխեմաների (վարկավորում, լիզինգ, մասնավոր պետական գործընկերություն, ածխածնային ֆինանսներ) օգտագործմամբ արևային վահանակների տեղադրման համար:
- Ծրագրի առաջին փուլում մշակված Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի քննարկում շահառու կողմերի հետ: Աջակցություն EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների

կազմակերպում: Էներգիայի կառավարման գործիքի ստեղծման հայեցակարգի մշակում, ֆոկուս խմբերի հետ հանդիպումներին մասնակցություն, գնման հայտերի կազմում, ծրագրային ապահովման մշակում, փորձարկում և իրականացում:

- Համատիրությունների, հանրության և այլ համայնքների կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն: Մասնակցության ցուցաբերում ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին:

4. Ակնկալվող արդյունքներ

- Շենքերում արևային վահանակների օգտագործման համար կրկնօրինակման ներդրումային մոդել
- «Արևային ուղեցույցի»
- Քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության սխեմա
- Վերոհիշյալ առաջադրանքների հետ կապված այլ արդյունքներ

5. Վճարման պայմանները

Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է մինչև 88 օր՝ 5 ամսվա ընթացքում: Պայմանագրի կատարումն իրականացվելու է յուրաքանչյուր ամսվա համար պատվիրատուի կողմից առաջադրանքով սահմանված օրերի հիման վրա:

2-րդ չափաբաժին

Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Համառոտ ակնարկ

Երևանի քաղաքապետարանը ԵՄ աջակցությամբ իրագործում է «Երևան.Արևային համայնք» ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.111-Ա որոշմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018-2021թթ. ընթացքում:

Երևան քաղաքում բնակչության մեծամասնությունը՝ ավելի քան երկու երրորդը (շուրջ 720000 բնակիչ), ապրում է բազմաբնակարան շենքերում: Երևանում առկա է 4932 բազմաբնակարան շենք, որից 4428-ում առկա է վերելակ:

Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» համաձայն՝ բնակելի շենքերին բաժին է ընկնում քաղաքի բազային էներգասպառման կեսը: Ծրագրի նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված

ջերմոցային գազերի արտանետումները (ՋԳ)՝ էներգախնայողության միջոցառումների իրականացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով:

Ծրագրի նպատակն է աջակցել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին (համատիրություններին) էներգասպառման կառավարման գործում՝ էներգաարդյունավետության միջոցառումների կիրառման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման միջոցով՝ ապահովելով բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրությունը (շքամուտքերի, աստիճանավանդակների լուսավորություն, վերելակի էլեկտրաէներգիա, բակային լուսավորություն և այլն):

Արևային վահանակները նախատեսվում է տեղադրել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի տանիքներին: Այսպիսով, արևային վահանակների տեղադրումը շենքի տանիքներում շահավետ կլինի բոլորի համար: Ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան ամբողջությամբ կծածկի շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների և բակային տարածքների էներգիայի սպառման պահանջարկը, իսկ ավելցուկը կվաճառվի էլեկտրական ցանցին: Եկամուտները կկուտակվեն յուրաքանչյուր շենքի համար ստեղծված նպատակային բնակային հաշիվներում և կարող են օգտագործվել շենքերում էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված, նախապես հաստատված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Նշանակման նպատակը

Էներգետիկ աուդիտոր/ էներգաարդյունավետության փորձագետը ծրագրի աշխատանքային խմբի ղեկավարի համակարգմամբ պատասխանատու կլինի ծրագրի տեխնիկական բաղադրիչի նախագծման և ներդրման համար, ներառյալ՝

ա) թեկնածու շենքերի պարզ էներգետիկ աուդիտի իրականացում (վերելակներ, ընդհանուր օգտագործման տարածքներում ներշենքային և արտաքին լուսավորություն և այլն),

բ) արևային վահանակների տեղադրման համար տեխնիկական առանձնահատկությունների/առաջադրանքի մշակում և նախագծում,

դ) արևային վահանակների տեղադրման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնումների կազմակերպման համար տեխնիկական առաջադրանքի մշակում,

ե) էներգետիկ տնտեսումների ազդեցության գնահատում և մոնիթորինգ,

զ) շրջանառու հիմնադրամի և էներգետիկ կառավարման թափանցիկ համակարգի ստեղծմանն աջակցություն,

է) «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում ներդրում,

ը) դասընթացի անցկացում՝ քաղաքային էներգետիկ պլանավորման կարողությունների ստեղծման/զարգացման նպատակով:

3. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Հաշվետվությունների մշակում, գործողությունների պլանավորում, մասնակցություն ժողովներին (նաև հեռավար), աշխատանքային հանդիպումներին:

- Առաջին և երկրորդ փուլերով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման աշխատանքներին աջակցություն, տեխնիկական փաստաթղթերի վերանայում և ընդունում:
- Առաջին փուլով ընտրված շենքերում տեղադրման աշխատանքների վերահսկողության և մոնիթորինգի ապահովում:
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ծրագրի երկրորդ փուլով ընտրված ԲԲՇ-ների տվյալների բազայի ձևավորման գործընթացին: Երկրորդ փուլի շենքերի ցուցակի վերանայում, վերջնական գնահատում և հաշվետվության կազմում:
- Երկրորդ փուլով ընտրված շենքերի էներգիայի պահանջարկի վերլուծություն, արևային ՖՎ համակարգերի չափագրում առանց ՖՎ մոդելավորման: Երկրորդ փուլով ընտրված շենքերի ներքին և արտաքին լուսավորության համակարգերի չափագրմանն աջակցություն:
- Լուսավորության փորձագետի հետ համատեղ, վարչական շրջանների աշխատակազմի աջակցությամբ երկրորդ փուլով ընտրված շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների էներգետիկ սպառման գնահատման իրականացում (վերելակներ, ներշենքային և արտաքին լուսավորություն):
- Լուսավորության փորձագետի հետ համատեղ՝ համապատասխան տիպի շենքերում վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումների ծախս-օգուտների վերլուծություն, որը կօգտագործվի ծրագրի ղեկավարների կողմից՝ շենքերի կառավարման մարմինների և սեփականատերերի հետ հաղորդակցման ռազմավարության մշակման համար:
- Շահառու շենքերի համար նախատեսվող ապրանքների և ծառայությունների համար տեխնիկական առանձնահատկությունների (առաջադրանք) մշակում, տեղադրվող արևային ֆոտովոլտային համակարգերի հզորությունների հաշվարկում, գնման փաթեթների տեխնիկական օժանդակություն:
- Աջակցություն հայտատուների տեխնիկական առաջարկի գնահատման գործընթացին:
- Կայուն էներգետիկայի ֆինանսավորման կարճաժամկետ ավագ փորձագետի և լուսավորության փորձագետի հետ համատեղ բազային ուսումնասիրության անցկացման, արդյունքների գնահատման, մասնակիցների համար ձևանմուշի և այլ տեխնիկական առաջադրանքի մշակում:
- Ծրագրի առաջին փուլում մշակված Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի քննարկում շահառու կողմերի հետ: Աջակցություն EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների կազմակերպում: Էներգիայի կառավարման գործիքի ստեղծման հայեցակարգի մշակում, ֆոկուս խմբերի հետ հանդիպումներին մասնակցություն, գնման հայտերի կազմում, ծրագրային ապահովման մշակում, փորձարկում և իրականացում:
- Շենքերի կառավարման մարմինների համար դասընթացների անցկացում էներգետիկ տնտեսումների մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ՝ որպես էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի մի մաս:
- Աջակցություն երկրորդ փուլով ընտրված շենքերի շրջանառու ֆոնդի մոդելավորման, ֆինանսական կատարողականի վերլուծության աշխատանքներին:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ «Արևային ուղեցույցի» մշակմանն աջակցություն:
- Մասնակցություն Ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին:

4. Ակնկալվող արդյունքներ

- Ընտրված շենքերի պարզ էներգետիկ աուդիտներ՝ ներառյալ նախատեսվող վերականգնվող էներգետիկ միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Ընտրված շենքերի լուսավորության համակարգերի մանրամասն էներգետիկ աուդիտի վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ նախատեսվող էներաարդյունավետ լուսավորության միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Գնումների իրականացման գործընթացում արևային համակարգի տեղադրման ծառայությունների և ապրանքների ձեռք բերման տեխնիկական առաջադրանքի կազմում
- Ուղեցույց/խորհրդատվություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի և շրջանառու հիմնադրամի ստեղծման առնչությամբ
- Իրականացված միջոցառումների ազդեցությունը գնահատող մոնիտորինգ և հաշվետվություն, ներառյալ՝ յուրաքանչյուր շենքի համար հաշվարկված ՋԳ արտանետումների կրճատման վերաբերյալ տեղեկատվություն՝ քաղաքապետարանին և դոնորներին ներկայացվելիք հաշվետվության համար
- Մասնակցություն քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության մոդելի մշակման գործընթացին
- Բազմաբնակարան բնակելի շենքերի սեփականատերերի և համատիրությունների համար «Արևային ուղեցույցի» համապատասխան հատվածի ներկայացում
- Դասընթացներ և վերապատրաստման նյութեր
Վերոհիշյալ առաջադրանքների հետ կապված այլ արդյունքներ

5. Վճարման պայմանները

Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է մինչև 100 օր՝ 5 ամսվա ընթացքում: Պայմանագրի կատարումն իրականացվելու է յուրաքանչյուր ամսվա համար պատվիրատուի կողմից առաջադրանքով սահմանված օրերի հիման վրա:

3-րդ չափաբաժին Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Համառոտ ակնարկ

Երևանի քաղաքապետարանը ԵՄ աջակցությամբ իրագործում է «Երևան.Արևային համայնք» ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.111-Ա որոշմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018-2021թթ. ընթացքում:

Երևան քաղաքում բնակչության մեծամասնությունը՝ ավելի քան երկու երրորդը (շուրջ 720000 բնակիչ), ապրում է բազմաբնակարան շենքերում: Երևանում առկա է 4932 բազմաբնակարան շենք, որից 4428-ում առկա է վերելակ:

Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» համաձայն՝ բնակելի շենքերին բաժին է ընկնում քաղաքի բազային էներգասպառման կեսը: Ծրագրի նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված ջերմոցային գազերի արտանետումները (ՋԳ)՝ էներգախնայողության միջոցառումների իրականացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով:

Ծրագրի նպատակն է աջակցել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին (համատիրություններին) էներգասպառման կառավարման գործում՝ էներգաարդյունավետության միջոցառումների կիրառման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման միջոցով՝ ապահովելով բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրությունը (շքամուտքերի, աստիճանավանդակների լուսավորություն, վերելակի էլեկտրաէներգիա, բակային լուսավորություն և այլն):

Արևային վահանակները նախատեսվում է տեղադրել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի տանիքներին: Այսպիսով, արևային վահանակների տեղադրումը շենքի տանիքներում շահավետ կլինի բոլորի համար: Ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան ամբողջությամբ կծածկի շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների և բակային տարածքների էներգիայի սպառման պահանջարկը, իսկ ավելցուկը կվաճառվի էլեկտրական ցանցին: Եկամուտները կկուտակվեն յուրաքանչյուր շենքի համար ստեղծված նպատակային բնակային հաշիվներում և կարող են օգտագործվել շենքերում էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված, նախապես հաստատված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Նշանակման նպատակը

Լուսավորության ճարտարագետը ծրագրի աշխատանքային խմբի ղեկավարի համակարգմամբ պատասխանատու կլինի ծրագրի տեխնիկական բաղադրիչի նախագծման և ներդրման համար, ներառյալ՝

ա) շենքերի ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համակարգի ԷԱ միջոցառումների նախագծման և տեխնիկական առաջադրանքների մշակում,

բ) լուսադիոդային լուսավորության տեղադրումների համար նախատեսվող ապրանքների և ծառայությունների գնման տեխնիկական առաջադրանքների մշակում,

- գ) ԷԱ լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում տնտեսումների մոնիտորինգ, տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ, էներգետիկ տնտեսումների ազդեցության գնահատում/գնահատման մոնիտորինգ
- դ) «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում ներդրում,
- ե) քաղաքապետարանի աշխատակազմի համար դասընթացների անցկացում լուսավորության արդիականացման վերահսկման և շահագործման աշխատանքների համար, ԷԱ դասընթացների անցկացում՝ քաղաքային էներգետիկ պլանավորման կարողությունների ստեղծման/զարգացման նպատակով:

3. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Հաշվետվությունների մշակում, գործողությունների պլանավորում, մասնակցություն ժողովներին (նաև հեռավար), աշխատանքային հանդիպումներին:
- Արևային կայանների, ներքին և արտաքին լուսավորության համակարգերի տեղադրումից հետո ԾԻԱԽ-ի հետ համատեղ համատիրությունների համար նպատակային հաշիվների գործունեության և կառավարման վերաբերյալ դասընթացների անցկացում:
- Առաջին և երկրորդ փուլերով նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման աշխատանքներին աջակցություն, տեխնիկական փաստաթղթերի վերանայում և ընդունում:
- Առաջին փուլով ընտրված շենքերում տեղադրման աշխատանքների վերահսկողության և մոնիթորինգի ապահովում:
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ծրագրի երկրորդ փուլով ընտրված ԲԲՇ-ների տվյալների բազայի ձևավորման գործընթացին: Երկրորդ փուլի շենքերի ցուցակի վերանայում, վերջնական գնահատում և հաշվետվության կազմում:
- Երկրորդ փուլով ընտրված շենքերի տեղում գնահատում, ներքին և արտաքին լուսավորության համակարգերի չափագրում:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ «Արևային ուղեցույցի» մշակմանն աջակցություն:
- Ծրագրի առաջին փուլում մշակված Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի քննարկում շահառու կողմերի հետ: Աջակցություն EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների, ֆոկուս խմբերի հետ հանդիպումներին մասնակցություն, գնման հայտերի կազմմանն աջակցություն:
- Համատիրությունների, հանրության և այլ համայնքների կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն: Մասնակցության ցուցաբերում ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին:
- Ծրագրով ընտրված բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների էներգետիկ սպառման գնահատմանը մասնակցություն (վերելակներ, ներշենքային և արտաքին լուսավորություն):

- Ընդհանուր օգտագործման տարածքների լուսավորության համար առկա լուսավորության ենթակառուցվածքի, օգտագործվող լուսատուների, տեխնիկական ցուցանիշների, լուսավորության բազային հարմարավետության ուսումնասիրություն (վերելակի ներսի հատված, շքամուտք, աստիճանավանդակ, բակային տարածք):
- Շենքերում և բակային տարածքներում էներգաարդյունավետության միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծություն, որը կօգտագործվի ծրագրի ղեկավարների կողմից շենքերի կառավարման մարմինների և սեփականատերերի հետ հաղորդակցման ռազմավարության մշակման համար: Շենքերի էներգետաարդյունավետության միջոցառումների իրականացմանը տեխնիկական աջակցության ցուցաբերում:
- Աջակցություն լուսադիոդային լուսատուների գնման հայտերի, մրցութային փաթեթների կազմման աշխատանքներին, աջակցություն հայտատուների տեխնիկական առաջարկի գնահատման գործընթացին:

4. Ակնկալվող արդյունքներ

- Ընտրված շենքերի լուսավորության համակարգերի արդիականացման վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ նախատեսվող վերականգնվող էներգետիկ միջոցառումների ծախս-օգուտների վերլուծությունը:
- Գնումների իրականացման գործընթացում լուսավորության համակարգի արդիականացման ծառայությունների և ապրանքների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքի կազմում:
- Ուղեցույց/խորհրդատվություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի և շրջանառու հիմնադրամի ստեղծման առնչությամբ:
- Իրականացված էներգաարդյունավետ միջոցառումների արդյունքում առաջացած էներգետիկ տնտեսումների մոնիտորինգ:
- Դասընթացներ և վերապատրաստման նյութեր:
- Մանակցություն քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության մոդելի մշակման գործընթացին:

5. Վճարման պայմանները

Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է մինչև 85 օր՝ 5 ամսվա ընթացքում: Պայմանագրի կատարումն իրականացվելու է յուրաքանչյուր ամսվա համար պատվիրատուի կողմից առաջադրանքով սահմանված օրերի հիման վրա:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71311300/1	ավագ ֆինանսական փորձագետի ծառայությունների ձեռքբերում	10	10	10	100 %
2	71311300/2	էներգետի աուդիտորի ծառայությունների ձեռքբերում	10	10	10	100 %
3	71311300/3	լուսավորության ճարտարագետի ծառայությունների ձեռքբերում	10	10	10	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին"
 ** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

 /ստորագրություն/
 Կ.Տ

 /ստորագրություն/
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (վիաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

NOTICE
ON PRICE QUOTATION

This text of the notice is approved by decision of the Price Quotation Commission"number of the decision "3 "04" "09" of 2020 and is publishedpursuant to Article 27 of the Law of the Republic of Armenia "On procurement"

Code of the price quotation EQ-GHTsDzB-20/247

The contracting authority Yerevan municipality, located at the following address: the 1 Argishti Str, Yerevan, RA gives notice for a price quotation which shall be carried out in one stage, through Armepps (www.armepps.am) system of electronic procurement.

The bidder selected based on the results of the price quotation will be proposed, in a prescribed manner, to conclude a contract for Provision of Services of Senior Expert, Energy Auditor / Energy Efficiency Expert և Lighting Engineer Services (hereinafter referred to as "the contract").

Pursuant to Article 7 of the Law of the Republic of Armenia "On procurement", any person, irrespective of the fact of being a foreign natural person, an organisation or a stateless person, shall have equal right to participate in the price quotation.

The qualification criteria for the persons ineligible to participate in the price quotation, as well as for bidders, and the documents to be submitted for the evaluation of those criteria shall be established by the invitation for this procedure.

The selected bidder shall be determined from among the bidders having submitted bids evaluated as satisfying the requirements of the invitation, by the principle of giving preference to the bidder having submitted the lowest price proposal.

For receiving the hard copy of the invitation for the price quotation, it is necessary to apply to the contracting authority by 11:00 o'clock of the 7 day from the date of publication of this notice. Moreover, an application in writing must be submitted to the contracting authority for receiving the hard copy of the invitation. The contracting authority shall ensure the free of charge provision of the hard copy of the invitation (or in case of submitting, attached to the application, the copy of the document issued by the bank, attesting to the payment of AMD 1500 which may not exceed the amount of costs incurred for photocopying and delivering the invitation¹) on the first working day following the receipt of such request. (The payment must be made to the account 247010087184 of "Departmental Buildings Operation and Maintenance" CSC in "Ardshinbank"²).

In case of a request to provide the invitation electronically, the contracting authority shall ensure the free of charge provision of the invitation electronically within the working day following the date of receipt of the application.

¹The phrase specified in the brackets shall be removed where no fee is envisaged for provision of the invitation; otherwise the words "free of charge" shall be removed from the sentence.

²The sentence specified in the brackets shall be removed where no fee is envisaged for provision of the invitation.

Failure to receive the invitation shall not limit the bidder's right to participate in this procedure.

The bids for the price quotation must be submitted electronically, through Armeps (www.armeps.am) system of electronic procurement, by 11:00 o'clock of the 7 day from the date of publication of this notice. The bids may, in addition to Armenian, also be submitted in English or Russian.

The bid opening will take place electronically, through Armeps system of electronic procurement, at 11:00 o'clock on the 7 day from the date of publication of this notice.

The appeals concerning this procedure must be filed to the Procurement Appeals Board, to the following address: Melik-Adamyan St. 1., Yerevan. The appealing shall be carried out as prescribed by the invitation for this price quotation. For filing the appeal, a fee shall be required in the amount of AMD 30 000 (thirty thousand), which must be transferred to the treasury account 900008000482 opened in the name of the Ministry of Finance of the Republic of Armenia.

For receiving additional information concerning this notice, you may apply to V. Mejunc, Secretary of the Evaluation Commission

Telephone +374 11 514373

E-mail gor.muradyan@yerevan.am

Contracting authority Yerevan municipality

ОБЪЯВЛЕНИЕ ОБ ЗАПРОСЕ КОТИРОВОК *

Настоящий текст объявления утвержден Решением Оценочной Комиссии от "04" "09" 2020 года "З"

Код процедуры EQ-GHTsDzB-20/247

Процедура закупки объявляется с применением статьи 15 (5) Закона о закупках РА

Заказчик мэрия г.Еревана, находящийся по адресу: РА, г.Ереван, ул. Аргишти 1 объявляет объявляет запрос котировок, который проводится одним этапом, посредством системы электронных закупок Armeeps (www.armeeps.am).

Участнику, отобранному по итогам процедуре котировок, в установленном порядке будет предложено заключить договор для реализация программы Европейского союза, «Ереван Солнечная община», по предоставлению услуг краткосрочного старшего финансового эксперта», энергоаудитора/эксперта по энергоэффективности и услуг инженера по свету (далее — договор).

Согласно статье 7 Закона Республики Армения "О закупках", любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право на участие в настоящей процедуре.

Условия предъявляемые к лицам, не имеющим права на участие в данной процедуре, а также участникам, установлены приглашением на настоящую процедуру.

Отобранный участник определяется из числа участников, подавших заявки, оцененные удовлетворительно по неценовым условиям, по принципу предпочтения, отдаваемого участнику, представившему минимальное ценовое предложение.

В отношении настоящей процедуры применяются положения Соглашения Всемирной торговой организации по правительственным закупкам.¹

Для получения приглашения на процедуру в бумажной форме необходимо обратиться к заказчику **до 11:00 часов 7-го дня** со дня опубликования настоящего объявления. При этом для получения приглашения в бумажной форме заказчику должно быть представлено письменное заявление. Заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в бумажной форме (или в случае представления вместе с заявлением копии выданного банком документа, подтверждающего уплату 1500 драмов РА, которые не могут превышать размер производимых расходов на копирование и доставку приглашения²) в первый

* Если закупка осуществляется в форме запроса котировок или закупок у одного лица, обусловленного безотлагательностью, то секретарь оценочной комиссии в процессе подготовки текстов объявления и приглашения на основании настоящей типовой формы документа, во всех разделах, пунктах и абзацах, включая типовые формы документов, которые должны быть представлены участниками, и в которых использовались слова "открытый конкурс", заменяет соответственно словами "запрос котировок" или "закупка у одного лица, обусловленная безотлагательностью", а в коде процедуры- слово "BMTsDzB", соответственно словами "GHTsDzB" и "HMTsDzB",

¹ Если цена закупки не превышает пороги, установленные Соглашением Всемирной торговой организации по правительственным закупкам, то настоящее предложение исключается из объявления.

² Указанная в скобках фраза исключается, если за предоставление приглашения не предусматривается платеж;

рабочий день, следующий за получением такого требования (платеж необходимо внести на счет N 247010087184 ЗАО “Ардшинбанка”³).

При наличии требования о предоставлении приглашения в электронной форме заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в электронной форме в течение рабочего дня, следующего за днем получения заявления.

Неполучение приглашения не ограничивает права участника на участие в настоящей процедуре.

Заявки на настоящую процедуру необходимо подать в электронной форме, посредством системы электронных закупок Armpers (www.armpers.am), **до 11:00 часов 7 дня** с даты опубликования настоящего объявления.

Кроме армянского языка заявки могут быть поданы также на английском или русском языке.

Вскрытие заявок будет проводиться в электронной форме, посредством системы электронных закупок Armpers, **в 11:00 часов на 7 день (14-го сентября)** со дня опубликования настоящего объявления.

